ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА А РМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРЦАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

03. 03.2014թ.
թիվ 40

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի փետրվար ամսվա ընդունած որոշումները: Արձակած կարգադրություն չկա:

Առդիր 3/ երեք/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2014 թվականի N20-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի բ) ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականին փետրվարի 12 թիվ 01/04/465-14 գրությունը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի գերեզմանատան իրավական հատուկ ռեժիմը սահմանել բաց:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի ապրիլի 21-ի թիվ 16 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի փետրվարի 24

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2014 թվականի N21-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N47-Ն որոշման 2-րդ կետը, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին>> N47-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի փետրվարի 24

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի փետրվարի 24-ի
N21-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ

1. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4241 հոդվածով նախատեսված գումարից 50 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4824 հոդվածին:

2. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5221 հոդվածով նախատեսված գումարից 200 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5122 հոդվածին:

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Հրանտուհի Գևորգյան